

Ծ Ա Ղ Ի Կ

Մ Ա Ն Կ Ա Ն Յ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Դաստիարակութեան եւ Կրթութեան

ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑԻ կը հրատարակուի ամէն ուրբաթ or, ի բաց առեալ Յունիս եւ Յուլիս ամիսները : Բաժանորդագիրն է ԿԱՆԻՍԻԿ, Պոլսոյ եւ գաւառաց համար, տարեկան 50 դրանեկան . վեցամսեայ 25 դրանեկան, եռամսեայ 15 դրանեկան . Այլ երկրաց համար 12 ժրանք : Իւրաքանչիւր թիւը կ'արժէ 50 փարս, Գաւառ-նէրէն դրամստուրք ալ կ'ընդունուի : Բաժանորդագրութեան համար դիմել առ ՏՅՈՐԷՆ—Խմբագիր Միհրան Ասեմազ, Էսկի Ջապրիէ ճասէսի թիւ 61, Նշան Կ. Պերպլերեանի տպարանը :

ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑԲ

Ը Ն Թ Ա Ց Բ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՈՃՈՅ (1)

ԴԱՍԲ.

ԳԱՅԼ ՈՒ ԴԱՌՆ

Ջօրագունին միշտ իրաւունքն է յաղթող .

Ով չի հաւատար՝ հոս տեսնայ թող :

Գառնուկ մը կեցեր

Յըստակ առուակէն ծարաւը կ'անցնէր :

Գայլ մը ծոմ բերնով

Կուգայ հոն յանկարծ

Քաղցէն ըստիպուած

Բախտ մը փնտռելով :

Կատղելով իսկոյն ,

Կը կանչէ Գառին .

«Ի՞նչ յանդգնութիւն

Որ կեցեր ատ դին

Իմին խըմելու ջուրըս պըղտորես .

Ատ յանդգնութեանդ պատիժը կ'առնես :

«Տէր իմ վեհափառ , »

Գառնուկը կ'ըսէ , « Ինձ մի՛ բարկանար .

Այլ մէկ մը նայէ

Ջուրն որո՛ւն կողմէն դէպ ո՛ւր կը վազէ .

Ես քըսան քայլով

Կը խըմեմ հեռու հոս քեզմէ վարով .

Եւ ի՞նչպէս կ'ուզես

Որ քու խըմելիքդ ազտտեմ հոսկէց :

Քեզ քաշէ լեզուդ ,

Դո՛ւ կը պըղտորես , կանչեց Գայլն անգուլթ :

Աս ալ գիտեմ ես՝

Որ անցած տարի զիս անիծեր ես :

«Ի՞նչպէս կարելի

Այդ՝ ըսաւ Գառնուկն . երբ ծընած չէի .

Դեռ կաթ կուտեմ ես :

«Եղբայրդ ուրեմն էր , թէ որ դու ան չես :

Ջուրնիմ ես եղբայր :

«Մէկն ապա ցեղէդ պէտք է որ ըլլար .

Ձի դուք ամէնքդ ալ

Ինձ թըշնամի էք՝ հավիւ , շուն , ոչխար :

Ես ատանկ գիտեմ

Եւ հիմա պիտոր իմ վրէժս առնեմ :

Գայլն այսպէս վըճուեց ,

Ու խածաւ Գառնուկն անտառը խոթեց .

Հոն լափեց դանի

Առանց ա՛լ ուրիշ հարցիւործ տտեանի :

(1) Տես թիւ 3 .

ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գառնուկ մը իւր ծարաւը կ'անցնէր գետակէ մը: Անօթի Գայլ մը կը յանդիմանէ զայն իւր խմելու ջուրը պղտորելուն եւ զինքը անիծելուն համար: Ետոյ կը մեղադրէ Գառնուկին եղբայրը: Գառնուկը ամէն անգամ ինքզինքը կ'արդարացնէ: Գայլը այն ատեն կ'ամբաստանէ հովիւը եւ շուները, և առանց ուրիշ պատճառի կը տանի Գառնուկը և կ'ուտէ զայն:

ԼՈՒԾՈՒՄԸ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

1. ԱՆՁԻՆՔ, ՏԵՂ, ԵՒ ԺԱՄԱՆԱԿ

Որո՞նք են այս առակին մէջ գործող կենդանիները:— Գայլ մը և Գառն մը:

Իրողութիւնը ո՞ւր տեղի կ'ունենայ:— Գետակի մը եզրին:

2. ԽՕՍՔ ԵՒ ԳՈՐԾՔ

1. Գայլը ի՞նչ վիճակի մէջ առուակին քով կը հասնի:— Անօթի եւ կատաճ:

2. Ի՞նչ ըսելով Գայլը կը յանդիմանէ Գառնուկը:— Ըսելով թէ իւր խմելքը կը պղտորէ:

3. Գառնուկը ի՞նչպէս ինքզինքը կ'արդարացնէ:— Ըսելով թէ ինքը Գայլէն քսան քայլ վարով ջուր կը խմէ:

4. Գայլը այն ատեն ի՞նչ ամբաստանութիւն կընէ:— Կ'ամբաստանէ թէ անցած տարի զինքը անիծեր է:

5. Ի՞նչ կը պատասխանէ Գառնուկը այս ամբաստանութեան դէմ:— Կը պատասխանէ թէ ծնած չէր:

6. Գայլը ի՞նչպէս կը շարունակէ իւր ամբաստանութիւնը:— Նախ կը պնդէ թէ Գառնուկին եղբայրն է զինքը անիծողը, Ետոյ կը մեղադրէ հովիւները և շուները, երբ Գառնուկը կը պատասխանէ թէ եղբայր չունի:

3. ԱՐԴԻՒՆՔ

Գայլը ի՞նչպէս կ'եզրակացնէ իւր ամբաստանութիւնը:— Այս խօսքերով. պէտք է որ վրէժս լուծեմ: Յետոյ կը տանի գառնուկը անտառին խորը ուր կը լափէ զայն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այս առակէն ի՞նչ դաս կրնանք առնուլ: Այս դասը կրնանք առնուլ. թէ չարը, երբ աւելի զօրաւոր է, բռնութեամբ կը յաղթէ, եթէ չկարենայ իրաւամբ յաղթել:

ԽՕՍԿՅՈՒԹԻՒՆ

1. Առաջին տողը ճիշդ գաղափար մը կը յայտնէ:— Առաջին տողին խմաստը, առանձին առնելով, սխալ սկզբունք մ'է: Հաջորդէն անշուշտ ըսել ուզած է որ բռնութիւնը սովորաբար կը յաղթէ իրաւանց:

2. Այս տողը ուրիշ կերպով կրնայ բացատրուիլ:— Այս տողը կրնայ նաեւ այսպէս բացատրուիլ. Ով որ զօրագոյն է նա իրաւամբ յաղթող է. կամ Զօրագոյնը միշտ իրաւունք ունի:

3. Յստակին 3 հոմանիշ գտէք որ յարմարին առուակին:— Ականակիս. ջինջ. վրճիս:

4. Ի՞նչ բնաւորութիւն ունին Գայլն ու Գառնուկը:— Գառնուկը հեզ եւ հլու կենդանի մ'է. Գայլը անգուլթ, կատաղի և շատակեր է:

5. Ինչո՞ւ Գայլին համար ծով բերնով ըսուած է:— Հասկցնելու համար թէ որսի մը կը փափաքէր:

6. Ի՞նչ կ'ըսուի ծով բռնող մարդու մը:— Ծովապան:

7. Ի՞նչ կը նշանակէ քաղց բառը և ի՞նչ է իւր հականիշը:— Քաղց կը նշանակէ անօթութիւն, և իւր հականիշն է յագուրդ:

8. Ի՞նչ ըսել կ'ուզէ բախս մը փնտռելով բացատրութիւնը:— Թէ Գայլը լափելու որս կը փնտռէր:

9. Կը կանչէ ին տեղ ուրիշ բայ մը գործածեցէք:— Կը գոչէ:

10. Ի՞նչ կը նշանակէ յանդգնութիւն բառը:— Անխորհուրդ համարակութիւն:

11. Վեհափառ տիտղոսը որո՞ւ կը տըրուի:— Թագաւորաց և կաթողիկոսաց:

12. Ինչո՞ւ գառնուկը Գայլին «Տէր իմ, վեհափառ» կ'ըսէ:— Այս մեծարանաց ցոյցերով զայն աւելի դիւրաւ մեղմացնելու համար:

13. Բարկանալ բային երկու հոմանիշ գտէք:— Յասնուլ. զայրանալ:

14. Գտէք այն բառը որ կը նշանակէ անցած արի:— Հերու:

15. Գառնուկը ի՞նչպէս կը հաստատէ թէ ծնած չէր:— Ըսելով. ես կար կ'ուսեմ սակաւին:

16. Ի՞նչ կը կոչուի գառնուկին մայրը:— Ոչխար:

17. Գառնուկին պատասխաններուն վը-

կորդ: Կոճ. կորն: Կուտ. կուես: Կող. կոր: Կաղ. վար: Վառ. վսառ: Վարակ. վարակ: Վար. Վարդ: Տապակ. տապակ: Տրեխ. տրեխ: Տեղ. տեղ: Տոլ. տոլ: Դանկ. Դանակ: Դաստ. Դաստ: Վարուն. վարունգ: Բակ. Բնակ:

Ե.

Գ Ի Ի Տ

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ հարցմանց աշակերտք պարտին նպատասխանել.

1. Ի՞նչ բանի մէջ կը կայանայ քաղաքավարութիւնը: — 2. Քաղաքավար տղայոց բարեմասնութիւնները որո՞նք են: — 3. Բարեկիրթ տղայ մը ի՞նչպէս կը վարուի իւր ծնողաց, — իւր ուսուցչաց, — օտարաց, — իւր ընկերաց հետ:

Քաղաքավարութիւնը կը կայանայ ամենուրեք այնպիսի եղանակաւ խօսելու և վարուելու մէջ, որ ոչ ոք վշտանայ մեզի դէմ և մեք հաճելի ըլլանք ամէնուն:

Քաղաքավար տղայք միշտ մաքուր կը պահեն իւրեանց ձեռները, գլուխը և երեսը. մեծ հոգ կը տանին իւրեանց զգեստին մաքրութեան, եթէ աղքատ իսկ ըլլան. իւրեանց քաղաքացիք և շարժումները վայելուչ և համարձակ են, և միշտ համեստ նայուածք մը ունին:

Բարեկիրթ տղայ մը ամէն առաւօտ կ'երթայ սիրով բարի լոյս ըսելու իւր ծնողաց, և ամէն երեկոյ բարի գիշեր կը մղթէ նոցա: Երբ խօսի իւր ծնողաց, իւր ուսուցչաց կամ ուրիշ պատուաւոր մարդու մը հետ, միշտ հոգ կը տանի ուղիղ կենալու նոցա առջև, հանելու իւր գլխարկը, եթէ գլխարկ կը դնէ, և ձեռները գրպաններէն դուրս ունենալու: Այսպէս կը վարուի նաև օտարաց հետ, որոց, եթէ պատահի, ճամբայ կուտայ անցնելու և կ'ընէ նոցա պատշաճ ծառայութիւնները: Բարեկիրթ և քաղաքավար տղան կը սիրէ իւր բոլոր ընկերները. բայց կ'զգուշանայ տեսնուելու նոցա հետ որոնք անպատշաճ խօսքեր կ'ընեն, և չխաղար բնաւ փողոցներու մէջ կամ հասարակաց վայրերու վրայ:

Մ. ԱՍՔԱՆԱՋ

Մ Ի Զ Ի Ն Ը Ն Թ Ա Յ Ք

Ը Ն Թ Ա Յ Ք Ը Ա Ր Ա Դ Ր ՈՒ Թ Ե Ա Ն

ՎԵՐԱՄՈՒՑ Ի ԴՊՐՈՅՆ

(Ուսանողի մ'օրագրէն)

ՅԱՏԱԿԱԳԻԾ

Ենթադրեցէ՛ք թէ օրագիր մը կը բռնէք ձեր կեանքին—եւ թերեւս ձեր մէջ ընողներ ալ կան—, եւ անդ կ'արձանագրէք օր առ օր ձեր կեանաց կարեւոր դէպքերն, անոնց ձեր վրայ ըրած տպաւորութիւնքն, ձեր մտաց մէջ յարուցած խորհրդածութիւնքն: Ենթադրեցէ՛ք դարձեալ թէ ներկայ դպրոցական տարւոյ առաջին օրուան (1890 սեպտ. 1) գիշերն էք, նստած ձեր գրասեղանի առջեւ, ձեր օրագրին առջեւ, ուր կը գրէք ձեր նոյն աւուր գագուսներըն: Յետ պարապոյ աւուրց, դպրոց էք դարձեր վերստին ձեռք առնուլ ձեր ուսանողական աշխատութիւնքն, ուրախութեամբ տեսած էք որ ձեր նախորդ տարւոյ ջանքեր պսակուած են. կարգ փոխած էք, նոր ու աւելի բարձր ուսումներ ունիք սովորիլ յառաջիկայ տարուան մէջ որ կ'ըսկըսի...: Զէք կրնար, սակայն, ակնարկ մը չձգել պարապոյ՝ զքօսանաց այն գեղեցիկ աւուրց վրայ որք սահեցան: Գիւղն էիք, Վոսփորի եզերաց վրայ. ո՞րչափ զուարճալի էր կեանքն ուն: Կը պատմէք այդ կեանքը.— առաւօտուն կանուխ արթննալով կ'երթայիք ծով մտնել. ի՞նչ տպաւորութիւններ կ'ընդունէիք բնութենէն, ի՞նչ հիասքանչ տեսիլ կ'ընծայէր նա, ամառնային առաւօտներու այդ զմայելի պահուն. պայծառ երկինքը, ծաղկաբոյր օդը, հանդարտիկ ծովը, արեւուն նախարձակ ծիրանի ճաճանչները, այս ամենայն կը ներկայանայ ձեր մտաց, եւ դուք կը նկարագրէք այն պատկերը որ ձեր երեւակայութեան մէջ կը գծուի...: Յետոյ, միջօրէի ճաշը, յաճախ բաց օդին մէջ առնուած, ձեր պոյտները լերանց վրայ, դաշտաց մէջ, անտառաց հովանւոյն տակ, եւ գիշերը մակուկով ծովուն վրայ, երգելով եւն:

Սոքա անցան, բայց չէք ցաւիր. կեանքի նպատակը աշխատին է, զբօսանքն հանգիստ մ'է, կազդուրման միջոց մը, Ուրախութեամբ կը դառնաք ձեր ուսումներուն. նոր տարւոյ դասերը աւելի բարձր, աւելի դժուար են, բայց դո՛ւք ալ ձեր ջանքերը պիտի բազմապատկէք: Նոր տարւոյն համար առաջադրութիւններ կ'ընէք աշխատասիրութեան, կանոնապահութեան, ձեր ուսուցչաց եւ ընկերաց հետ լսագոյն վարմունքն ունենալու: Վերջապէս է՛ր չ'աշխատիք. ծոյլ աշակերտը տգէտ մը միայն կրնայ ըլլալ, եւ դուք կը սոսկաք այդ վիճակէն, որ մտաւոր կուրուծիւն մ'է որոյ մէջ թշուառ միայն կրնայ ըլլալ մարդըն: Կը յիշէք ձեր Եղիշէին խօսքը, «լա՛ւ է կոյր աջօք քան կոյր մտօք»: Երկինքէն կը խնդրէք կարողութիւն եւ շնորհ, որպէս զի կարենաք իրականացնել ձեր բարի խորհուրդներ:

ԸՆԴԼԱՅՆՈՒՄՆ

1890, Սեպտ. 1.

Անցան սարսափոյ աւուրք եւ ահա վերըստին ձեռք կ'առնու՛մ դպրոցական աշխատութիւնքս: Պարտաւոյ առա՛ւրք. . . ի՛նչ գեղեցիկ օրեր էին. քանիտ՛ն հաճոյք, ի՛նչ զրօսանքներ վայելցցի այդ մէկ ու կէս ամսուան մէջ: Գիւղն էինք, Վոսիտրի ափանց վրայ. ո՛րչափ զուարճալի էր կեանքն հոն: Առաւօտուն կանուխ կ'եղնէի, կը հագուէի, եւ առաջին գործս կը լինէր ծով երթալ լըւացուիլ: Արեւը դեռ նոր կը ծագէր, երկինքը պայծառ կապոյտ, անոյշ զովութիւն մ'օգին մէջ տարածուած էր, եւ գիւղին պարտէզներէն ելնող ծաղկանց քաղցր բուրմունք կը խնկէին ճամբայներն: Հանգարտիկ էր յաճախ ծովն. մանր ալիքներ կուգային մեզմ' ճլուրլիւնով սպառիլ եղբրքին վրայ. ծովուն վրայ արեւուն ճաճանջք կը նմանէին ոսկի մողերու, արծաթափայլ թիկանց վրայ սփռուած: Միջօրէի ճաշէն յետոյ, շատ անգամ ընտանեօք կ'երթայինք գիւղին կռնակը բլրոյ վրայ տարածուող անտառներուն մէջ, ուր չէին կարող թափանցել արեգական կիզիչ ճառագայթներն եւ կը տիւրէր հեշտալի զովութիւն մը: Թէ եւ գիշերները կարճ, բայց ընթրիքէն յետոյ, զոր շատ անգամ աստեղազարդ երկնից տակ

դալար խոտերու վրայ կ'առնուինք, մի քանի ժամ կը պտտէինք ծովեղբրքն, մանաւանդ երբ լուսինը կը փայլէր երկնից մէջ իբրեւ աստուածալառ լապտեր մը, եւ կամ մահուկով կը նաւարկէինք մեղմածուփ ալեաց վըրայ, քոյրերուս հետ ի միասին երգելով, եւ երբեմն ուշ դնելով քաղցրանուագ սրնգի մը ձայնին որ հեռաւոր նաւակէ մը կ'եկնէր. . . :

Անցան այս հաճոյալից օրերն, բայց ես չեմ ցաւիր. վասն զի կեանքի նպատակն զբօսնուլը չէ, այլ աշխատիլը: Զրօսանքն հանգիստ մ'է որ կը կազդուրէ մեր յոգնած մարմինն ու միտքն. բայց յետ հանգստեան հա՛րկ է վերստին ձեռն ի գործ մխել: Ահա՛ ինձ համար հնչեց կրկին աշխատութեան ժամն, եւ ես նոր տշխուժիւ կը դառնամ ի դպրոց: Նոր դասարան մը կը մտնեմ. անցեալ տարւոյ աշխատութիւնքս պսակուած են, եւ քննութեանցս արդիւնքն արժանի ըլած են զիս փոխելու իմ կարգս: Նոր եւ աւելի բարձր ուսումներ ունիմ ուսանելու այս տարւոյ մէջ, որք եւս առաւել պիտի զարգացնեն միտքս եւ ազնուացնեն սիրտս, եւս առաւել պիտի ճանչցնեն ինձ զաշխարհ եւ զմարդիկ: Անտարակոյս մի քիչ աւելի դժուարին են այս շրջանի դասերս, եւ պարտականութիւնք՝ մի քիչ աւելի բազմաթիւ: Բայց չէ՛ փոյթ. ե՛ս ալ կը բազմապատկեմ ջանքերս եւ կը յաղթեմ՝ դժուարութեանց: Յարատեւ եւ յամառ աշխատութեան առջեւ կա՞յ դժուարութիւն մ'որ անյաղթելի մընայ: Լաւ պիտի գիտնամ ժամանակին յարգը. ունայն եւ անօգուտ բաներով ժամաւաճառ չպիտի լինիմ. ուշագիւր պիտի լինիմ ուսուցչացս խօսքերուն. անթերի պիտի կատարեմ բոլոր այն պարտքեր զորս նոքա պիտի դնեն իմ վրայ. պիտի լինիմ յարգալիւ տու Դաստիարակս իմ եւ հըռ վարժարանական կանոնաց: Այն ատեն արդիւնաւոր պիտի գործեմ այս դպրոցական տարին ալ, որ փառքով պիտի աւարտի ինձ համար:

Եւ է՛ր չաշխատիմ ուսանիլ. ո՛րքան տըխուր բան է տգէտ լինելն: Եղիշէիս մէջ կը կարդայի « Լաւ է կոյր աջօք քան կոյր մտօք: » Ո՛րքան իրաւունք ունի Եղիշէ. մըտակոյր մարդն ոչինչ կը հասկնայ աշխարհէն, չի ճանչեր իւր անձն, անգէտ է իւր իրաւանց ու պարտուց. թշուառ էակ մ'է

այնպիսին: Տէ՛ր, տուր ինձ զօրութիւն աշխատութեան և կորով իմ մտայս, որպէս զի չմնամ տգէտ և չլինիմ թշուառ:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԸՆԹԱՅԲ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԲ

Նյութ (Matière substance)՝ Մարմին (Corps) . — Ինչ որ կ'ըմբռնեմք մեր հինգ զգայարանաց միջոցաւ նիւթ կը կոչուի, և նիւթի սահմանաւոր քանակութիւն մը՝ մարմին:

Օրինակի համար, քարէ արձան մը, փայտի կտոր մը, կաշիէ մուճակ մը, գինով լի սրուակ մը, քլօր կազով լի փորձանօթ (éprouvette) մը կ'ըմբռնուին տեսնելով և շօշափելով. արև, լուսին ամպ կը տեսնուին միայն. օդ, ջուր, մետաղ մը կ'ըմբռնուին շօշափամբ, նաև լսելով իրենց ձայները, այսինքնանոց մասնկային թրթռումը զգալով. մուշկին, քափուրին, քարիւղին լոյծ մանր մասերը օդինմէջ կ'որոշենք իրենց հոտերէն դատելով. շաքարին, աղին խիստ փոքր քանակութիւնները իրենց համրէն կը ճանչնանք ջրոյ մէջ՝ եթէ գտնուին հոն լուծեալ:

Պարզ մարմիններ եւ բաղադրեալ մարմիններ . — Պարզ մարմին ըսելով կ'իմանանք մարմին մը որոյ մէջ քիմիական վերլուծումներով միայն մէկ տեսակ նիւթ գտնուած է. այսպէս են ծծումբ, ֆօսֆօր, բնածուխ, երկաթ, պղինձ, ոսկի, արծաթ, սնդիկ, պրօմ, եօտ, քլօր, թթուածին, ջրածին, ազոթ ևն: Բաղադրեալ մարմին կը կոչուին անոնք որ երկու կամ աւելի պարզ մարմինոց միացմամբ կազմուած են. ինչպէս՝ օդը որ խառնուրդ մ'է թթուածին և ազոթ կազերու, ջուրը որ միաւորութիւն մ'է ջրածին և թթուածին կազերու, մարմարիտն, փայտ, ոսկոր և այլ ամէն հանքային, բուսական և կենդանական մարմիններ որոցմով չըջապատուած կը գտնենք:

Պարզ մարմինք կը կոչուին նաև *swarr* (élément), և թուով վաթսուս և վեց են. բնութեան մէջ գտնուող այսքան տեսակ մարմիններ անոնց մի քանիներուն միացմամբ ձեւացած են: Նախնիք չորս տարր

կ'ընդունէին, օդ, ջուր, հող, հուր. բայց յայտնի է թէ՛ ո՛րքսն անպատշաճ է գիտութեան արդի ձեւին մէջ զանոնք տարր առնուանել:

Հիւլէ (Atome) . Մասնիկ (Molécule) . — Մարմինք շարունակեալ նիւթէ մը ձեւացած չեն, այլ նիւթի ամենափոքր մասերու հաւաքումներ են, մասեր որք անփոփոխելի են ձեւով ու ծաւալով, և անբաժանելի՝ բնագիտապէս. այդ մասեր նիւլէ կը կոչուին: Երկու կամ աւելի հիւլէներու միաւորութեամբ կազմուած են պարզ և բաղադրեալ մարմինոց մասնիկներն, և այս վերջինք առաւել կամ նուազ քանակութեամբ ի մի խմբուելով ձեւացուցած են զանազան ծաւալով մարմիններ:

Այս բացատրութեամբ կը հասկցուի թէ հիւլէներու իրարու նկատմամբ ունեցած այս կամ այն դիրքը մասնիկին կամ մարմնոյն նիւթը (Substance), այսինքն բաղադրութիւնը յառաջ կը բերէ, իսկ մասնկայ իրարու նկատմամբ առած դիրքը մարմնոյն ձեւը և ծաւալը կը յօրինէ:

Հիւլէ և մասնիկ այնքան փոքր պէտք է հասկնալ որ մինչեւ ցարդ զանոնք նիւթապէս ճանչնալ, այսինքն տեսնել, շօշափել, չափել կարելի չէ եղած: Բայց այս մասին վերջերս գետնոց ոմանց կատարած վանագան փորձերու առթիւ ձեռք բերուած արդիւնները քիչ չափ իրարու համաձայն կը գտնուին, սոյսյտնութեամբ թէ մասնկայ միջին տրամագիծը $\frac{1}{1000}$ միլլիմի և $\frac{1}{10000}$ միլլիմի միջև կրնայ նկատուիլ: Միքրոն (micron) կ'անուանեն մէթրին մէկ միլիոներորդ կամ միլիմէթրին մէկ հազարերորդ մասը: Որովհետև մինչև ցարդ յօրինուած ամենէն հզօր մանրադէտը միքրոնին $\frac{1}{4}$ ը հազիւ կրնայ ցուցնել, ուրեմն մասնիկ և հիւլէ տակաւին անտեսողներ զիտի մընան, մինչև որ աւելի հզօր մանրադէտ մը (250 $\times$ մինչև 2500 և աւելի անգամներ մեծցնող քան վերոյիշեալ մանրադէտն) կարելի ըլլայ հնարել:

Մասնիկը իրարու չեն դաժմ ոչ մէկ մարմնոց մէջ, այլ առաւել կամ նուազ ընդարձակ անջրպետներով իրարմէ հեռի կը մնան. այն ատեն այդ անջրպետներ կը կոչուին միջմասնկային կամ անզգալի ծակիկներ (pores intermoléculaires ou insensibles): Երկու հալընդգէմ զօրութիւններ մասնկային զօրու-

քիւնք անուանեալ, կը վարեն մասնիկներն . ստոնցմէ մին ձգողութիւնն (attraction) է որ կը մերձեցնէ զանոնք, միւսը ջերմութեան արածական զօրութիւնն (force expansive de la chaleur) որ կը հեռացնէ :

(Շարունակելի)

Ե. ԹԵՅԵԱՆ

ԳԱՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒ

ԳԱՂԻԵՐԷՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾԻ

ՀԱՆԴԵՐՁ ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՄԲԻ

1. Dis-moi qui tu hantes, je te dirai qui tu es¹.

(PROVERBE EXPLIQUÉ)

On ne recherche guère² ceux dont la tenue, les manières et les actes ne plaisent point; leur fréquentation froisserait nos habitudes et notre conscience. Si nous entrons en relations³ avec quelqu'un, c'est parce que nous voyons en lui presque un autre moi-même⁴: en d'autres termes⁵, parce que nous trouvons dans ses sentiments un écho des nôtres⁶.

Un honnête homme s'éloigne d'un fripon: une jeune fille modeste fuit les effrontées⁷; un élève rangé et soigneux a de la répulsion pour un condisciple malpropre⁸. Cela est naturel.

Aussi est-on fondé à reprocher à un enfant ses préférences et ses amitiés⁹, si elles portent sur¹⁰ des camarades peu estimables; chacun a le droit de le juger pareil à ceux qu'il fréquente.

«Es-tu la rose, demandait-on à une fleur dont on louait le parfum? — Non, mais j'ai vécu auprès d'elle.» — Qu'il en soit ainsi de nous¹¹; vivons dans la société des gens de bien¹².

E. LAPORTE

2. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԻ

1. Dis-moi qui tu hantes, je te dirai qui tu es. քէ ինձ թէ որն (որոց) քով կը յաճախես, պիտի քեզ քէ ո՛վ ես — Hanter (հանդէ) ներգործական է և կ'առնու հայց. խնդիր. hanter un lieu (տեղ մը յաճախել), hanter la mauvaise compagnie (գէշ ընկերութեան մէջ յաճախել): Այսպէս է նորա հոմանիշ fréquenter բայն ալ. Il ne faut fréquenter que de bons esprits et des honnêtes gens. (Միայն ուղղակի մարդոց և պարկեշտ ան-

ձանց քով յաճախելու է, այն է՝ միայն այսպիսեաց հետ տեսնուելու, յաճախակի յարաբերութիւններ ունենալու է): Բայց երկուքն ալ իբրեւ չէզոք ևս կը գործածուին, իբրեւ յաճախ երթալ, այցել, տեսնուիլ, à, dans, en, chez, avec նախադրութեամբք, միայն թէ այս ձեւ քիչ գործածական է այժմ: hanter, fréquenter chez quelqu'un. hanter, fréquenter en de mauvais lieux. Fréquenter avec les hérétiques. Acad.—Se hanter, se fréquenter, գերան. բայց, 1 կը նշանակեն յաճախակի իրարու երթալ գալ, տեսնուիլ յաճախ միմեանց հետ: — Առաջին qui ն է ապա հայցական իբրեւ գո՛վ, զա՛յս, սեռի խնդիր hantesին, իսկ երկրորդ qui ն է ուղղական (ո՛վ), ստորոգելի տին: — Qui իբրեւ յարաբ. գերանուն է միշտ և միայն ուղղական (որ, որք), բայց իբրեւ հարցական ուղղական և հայցական (ո՛վ, ո՛վ, զո՛վ, զո՛վ). Qui es-tu? (ո՛վ ես գու-). Qui cherches-tu? (Ձո՛վ կը փնտռես): Երբ հարցումն անուղղակի է, այսինքն երբ հայերէնի մէջ հարցական բառէն յառաջ քէ շարկապը կայ (թէ ո՛վ, թէ զո՛վ, թէ ի՛նչպէս եւն), գաղիերէնի մէջ բայը հարցական ձեւով չի գրուիր. Je lui demandai d'où il venait (իբրեւ հարցուցի թէ ուստի՛ կուգար), և ոչ թէ d'où venait-il? — Tu hantes, tu es, tu as, tu parles, tu parlas, tu parleras, tu finis, finiras, finirais, que tu finisses, tu dois, devais, dus, devras etc. tu prends, prenais, pris, que tu prennes etc. միշտ քայից եղակի երկրորդ դեմքն s մուկի իւր ծայր, ի բաց առաջալ. լծորդ. բայց և այլ լծորդութենէ ինչ ինչ անկանոն բայից հրամայական եղանակին մէջ, որպէս բացատրած եմք թիւ 9, բաց. 4:

2. On ne recherche guère, Դաս չի փնտռեր, չի փափաքիր, հետախուս չըլլար մարդ: — Rechercher, բացի իւր բնիկ նշանակութենէն (վերստին խնդրել, փնտռել) կը նշանակէ նաև ջանալ ձեռք բերել, փափաքիլ, հետախուս ըլլալ: — Guère նախական նշանակութեամբ է eus, բազում, բայց միշտ կը գործածուի ne ժխտական մակբային հետ որով ne ...guère կը նշանակէ ոչ eus, գրեթէ ոչ, քիչ. հոմանիշ pas beaucoup ի. Il ne s'en faut de guère, այսինքն il ne s'en faut pas de beaucoup կամ il s'en faut de peu [Քիչ մը բան կ'ուզէ, շատ չի մնար]. Quiconque ne voit guère N'a guère à dire aussi [Շատ բան չտեսնողը շատ ըսելիք ալ չ'ունենար]. — Ne... plus guère. ա՛լ ոչ eus, ալ գրեթէ ոչ, ալ միայն քիչ. Il n'y a plus guère moyen de réussir [Գրեթէ չ'ալ յաջողելու հնարք չկայ]: Ընտանեկան լեզուի մէջ՝ ne կրնայ զեղչուիլ և յայնժամ guère ինքնին կը նշանակէ քիչ. Je vais vous verser du vin... Guère. je vous prie. (Ձեզի՛ գինի լեցնեմ. — Քիչ, կ'աղչեմ, յ) Ne... guère plus կամ moins պարզապէս կը նշանակէ գրեթէ, շուրջ. Il n'y a guère plus de trois ans [Շուրջ երեք տմ է.] Naguère [քիչ ժամանակ յառաջ, երբեմն] մակբային կազմուած է guère էն, իբրեւ il n'y a guère (շատ չկայ, քիչ յառաջ):

Ոտանաւորի մէջ կը յանգի ու չափի պէտքի համար guères ալ կրնայ գրուիլ s ով:

3 Si nous entrons en relations avec quelqu'un. Իբրէ մէկու մը հետ յարաբերութեան մտնելով: — Entrer

բային՝ իւր զանազան առմանց մէջ՝ ո՛ւր հարցման պատասխանող ինքիւրը սովորաբար dans նախադրու-
թեամբ և մերթ à ով կը կաղմուէի, երբ ինքիւրն ո-
րոշեալ կամ անորոշ յօդ ունի. entrer dans la mai-
son, dans une chambre, dans la ville, dans le
port, au port, à l'autel, dans la pensée d'un au-
teur, dans les sentiments de quelqu'un, dans
une famille, dans le commerce, dans le monde,
dans un collège, au collège, dans un com-
plot, dans la tête. մտնել տունը, սենեակ մը, ֆա-
ղաք, ցաւանդակասր, խորանը. (եղեղ), հեղինակի
մը մտքին մէջ զայն հասնել, ոգին ըմբռնել, մէկու
մը զգացմանց մէջ [կարեւոր զգացական ըլլալ], ընս-
նիքի մը մէջ [խնամանայ], առեւտրով մէջ [առեւտրա-
կան ասպարեղի մէջ], աշխարհի [ընկերութեան] մէջ,
գիւտերովի դպրոց մը, դատարարեան մը մէջ
[մասնակցել անոր], գլխուն մէջ [ըմբռնուիլ, հաս-
կըցուիլ, խորհրդայ առարկայ ըլլալ] — բայց entrer
բայն առանց ո՛ր և է յօդի և յայնժամ en նախադր-
ութեամբ կը միանայ նաև շատ մը գոյականաց հետ
և կը կազմէ ասացուածներ զանազան առմամբ.
այսպէս Entrer en relation [յարաբերութեան մը առ-
նել], և հետեւեալք. Entrer — en danse [պարի մէջ
մտնել, փոխաբերաբար՝ գործի մէջ մտնել] en matière,
[նիւթին վրայ ճառելու սկսիլ], en religion [վանա-
կան, միաբան ըլլալ], en condition, en place [ծա-
ռայութեան մտնել], en composition [համաձայնու-
թեան գալ, իրաւախոհ ըլլալ], en prison [առտար-
կուիլ], en chaire [ամպիոնը ելնել], en scène [տե-
սարան գալ], en ménage [ամուսնանալ], en con-
valence [ապաքինիլ, առողջանալ սկսիլ], en con-
currence [մրցման ելնել], en colère, en fureur, en
indignation, en désespoir [բարկանալ, մոլեգնիլ,
սրտմտիլ, յուսահատիլ], en tentation [փորձուիլ,
փորձութեան մասնակցել], en charge, en fonction (ի
պաշտօն մտնել, պաշտօնավարութեան սկսիլ), en-
conversation [խօսակցութեան մտնել] ևն.

4 Un autre moi-même, Մի այլ ես, այն է ու-
րիշ անձ մը գործեր անձին պէս կը համարինք, կը
սիրենք ևն. Աստ moi-même գոյական մ'է. իմ իսկ
անձս, իմ եսս նշանակութեամբ. ահա՛ տար համար
առած է յօդ և անական. այսպէս կ'ըսուի un autre
toi-même, d'autres nous-mêmes, ևն.

5. En d'autres termes, Ուրիշ բաներով [ըսելով].
այսպէս՝ en un mot [ի մի բան, մէկ խօսով]. Ter-
me բառն, այս [բառ, բացատրութիւն] նշանակու-
թեամբ գործածուած է նաև հետեւեալ բացատրու-
թեանց մէջ. Parler de qqn. en bons termes, en
mauvais termes [մէկու մը վրայ լաւ խօսիլ, գէշ
խօսիլ]. En termes élogieux [Գովաբանական խօ-
սերով]. Je lui ai dit cela en propres termes
[Բառն այս խօսքերով ըսի զայս իրեն]. S'exprimer
en termes propres [Բառն լատուկ բառերով գոր-
ծածելով խօսիլ, իւր միտքը յայտնել]. Mesurer, pe-
ser ses termes [իւր խօսքերը չափել, կշռել, զգու-
շաւոր լինելով խօսիլ]. Ne pas ménager ses termes
[խօսքը չխնայել, այսինքն՝ խառն անհամոք բաներ ը-
սել մէկու մը]. Terme բառն կը նշանակէ նաև
սահման, սահմանագիծ, ծայր, վախճան, վաւարման
եզր.

6. Nous trouvons dans ses sentiments un écho
des nôtres, Նոյս զգացմանց մէջ կը գտնուի մերին.
Գտնուի [մեր զգացմանց] մի արձագանգ. Nous trou-
vons. Բայց սահմանական ներկայի յոգնակի երեք
դէմքերն անոնցեալ [dérivé] են և կը կաղմուեն
ընդունելութիւն ներկային ant վերջաւորութիւնը
փոխելով, on, ez, ent ի. միայն գ. լծորդութեան
[recevoir] մէջ յոգ. գ. դէմքը կը շինուի ընդ ներ-
կային evantը փոխելով oivent ի. Այսպէս. Ա. յծ.
ընդ. ներկ. aimant. սհմ. ներկ. յոգ. nous aimons [կը
սիրենք], vous aimez [կը սիրենք], ils aiment. [կը սի-
րեն] Բ. լծ. ընդ. ներկ. finissant. սհմ. ներկ. յոգ.
nous finissons, vous finissez, ils finissent. Գ.
լծ. ընդ. ներկ. recevant. սհմ. ներկ. յոգ. nous rece-
vous, vous recevez, ils reçoivent. Դ. յծ. ընդ.
ներկ. rendant. սհմ. ներկ. յոգ. nous rendons, vous
rendez, ils rendent. Անկանոն բայից մէջ քիչ են
այս կանոնէ զարտուղութիւնք. և այն առաւել ինչ
ինչ բայից յոգ. երրորդ դէմքն, ils vont [կ'երթան]
ils acquièrent [կ'ստանան], ils meurent [կը մե-
նեն], ils meurent [կը շարժեն], ils peuvent [կր-
նան], nous savons, vous savez, ils savent [գի-
տենք ևն. ընդ. ներկային է sachant], ils veulent
[կ'ուզեն], ils boivent [կը խմեն], vous dites [կ'ը-
սէք], vous faites [կ'ընէք], ils font [կ'ընեն], ils
prennent [կ'առնուեն], ils viennent [կուգան], ils
tiennent [կը բռնեն].

Echo կը կարգացուի էֆօ. և ո՛չ էֆօ. Ch ձայնա-
ւորներէ յառաջ ընդհանրապէս սենի ց ի հնչում, իսկ
բառաձայններէ յառաջ՝ ֆի. Chant (շան, երգ.), échan-
tillon [էչանիլյոն, նմիչ]. chrétien [քրիստոնէս], բը-
րիստոնէս], chlore [ֆլոր. քղոր], chilamye [ֆալմիս,
քղամիտ], Arachné [Արաքնէ, յատ. ան.], բայց նաև
ձայնաւորաց առջև յունարէնէ եւ երբայցեքէնէ և.
կած շատ բառից մէջ ch ֆ ի ձայն ունի. ինչպէս, բաց
écho էն, catéchumène [ֆալէֆալմէն, երախայ], ar-
change [արաքն, հրեշտակապետ], choeur [ֆօն,
պար], Achab [Աֆապ, Աբապ], Melchisédech [Մել-
ֆիսէտ, Մելքիսեղեկ], chaos [ֆաւ, քառ], orches-
tre [օնֆէտր, նուագախումբ], la Chaldée [լա Քալ-
սէ, Քաղդէս] ևն. Michel [Միշէլ, Միքայէլ] յատ-
անուել Michel-Angeի մէջ կը կարգացուի Միլի.

7. Une jenne fille modeste fuit les effrontées,
Համեստ աղջիկ մը խոյս կուտայ անաւորներէն, այ-
սինքն՝ անամօթ աղջիկներէն. Effrontée, անամօթ,
լիբբ աղջիկ, գոյականաբար գործածուած անական
է. Որակական անականք՝ մերթ առանց գոյականի
գործածուելով՝ կ'ըսուին գոյականաբար առնուած
անականք և կը նշանակեն նոյն յատկութիւնն ունե-
ցող մարդ, կից, իր. le juste [արդարը, այն է՝ ար-
դար մարդը], le sage [հմաստունը, այն է՝ հմաստու-
ն մարդը], les fous [իմարք, այն է՝ յիմար մարդիկ],
une sainte [արբուհի մը, սուրբ կին մը], une co-
quette [պիտուհի մը, պիտուկ կին մը], le beau [գե-
ղեցիկը, այն է՝ գեղեցիկ ըսուած բանը], l'utile [օգ-
տակարը], l'agréable [հաճոյն, հաճելի], le faux.
[սուտը, կեղծը], le naturel [բնականը], un préci-
eux [սեթեկեթիկ մը], ինչ ինչ ստույգութեանց մէջ ան-
կանը միշտ իգական ձևով կը գործածուի և լուրջայն
իմացուած գոյականը մարդ, կից, իր բառերէն տար-

բեր բառ մ'է. Or. Cuisine à l'italienne [իտալական ընկերական կերպի, à la mode italienne], այսպէս կ'ըսուի à la turque, à la franque [ուսկից շինուած են ալաքուրֆու, ալաքաւկա թըրքերէն բառերը], à la française, à l'anglaise, à l'antique etc. այսինքն à la mode turque, française, anglaise, antique, ըստ թուրքական, փրանկական՝ այն է եւրոպական, գաղիական, անգղիական, հինաւուրց են. ոճոյ, կերպի]. դարձեալ Attendez-vous à la pareille [այսինքն à la conduite pareille, (նմանօրինակ վարմունքի մ'ապաստեցէք)]:

8. Pour un condisciple malpropre, Աղսոս աւակերսալիցի մը համար, հակասամք. Malpropre [աղտոտ, անմաքուր], կազմուած է mal [չար, գէշ] մակբայէն և propre [մաքուր] ածականէն. mal բառն այսպէս գաղիերէնի մէջ կը գործածուի նաեւ իբրեւ նախադաս կցորդ [préfixe] մեր դժ, sd, չ, ապ, չար, կցորդներուն նմանակութեամբ եւ կը կազմէ բարդեալ [composé] բառեր [գոյական, ածական, բայ, նախադրութիւն]. malheur [գժեւիտութիւն], malveillance [չարակամութիւն], maladresse [անյաջողակութիւն], maladroite [չաջողակ], malaisé [գժեւար], malentendu [թիւրիմացութիւն], mal-séant [անպատշաճ], malhonnête [անպարկեշտ], malappris [անկիրթ], malsain [ապաւորջ], malgré [հակառակ, նիւ], maltôte [ապօրէն հարկ], malmené [չարաչար վարուել, տանջել], maltraiter [նշնել].

9. Aussi est-on fondé à reprocher à un enfant ses préférences et ses amitiés, Ուսի եւ իրաւունք ունի ոք իբրեւ յանցանք տու մը երեսին զարմելու նորա նախաձեռնարկներին ու բարեկամութիւններին, եւն չոս պէտք է նախ դիտել որ առանց խօսքին իմաստն հարցական ըլլալու՝ բայն հարցական ձեւով դրուած է. ինչո՞ւ. — պատճառն է աւել մակբային խօսքին սկիզբը դրուած ըլլալն. երբ աւել, [ուստի եւ], au moins, du moins [գէթ, գոնեայ], à peine [հազիւ, հազիւ թէ], peut-être [թեւեւ], en vain [ի զուր], encore [եւ դարձեալ, եւ այն], toujours [այսու հանդերձ. գէթ] կը գտնուին խօսքին սկիզբը, բայը շատ անգամ հարցական ձեւով կը դրուի. այսպէս A peine Colbert, après la chute de Fouquet, eut-il rétabli l'ordre dans les finances ... VOLT. [Հազիւ Գոլպեր, յետ անկման Ֆուքէի, կարգն ու կանոնն վերահաստատած էր ելեւմտից մէջ.]: բայց ստիպողական չէ. A peine nous sortions des portes de Trézène. Rac. [Հազիւ գուրս կ'ելլէինք Տրեզենի դռներէն]. միայն թէ այս ձեւ պարտաւորիչ կը տեսնուի encore և toujours էն յետոյ. Peut-être n'étaient—ce là que des fables inventées à plaisir. Toujours est-il que depuis trois ans que la comtesse habitait le pays, on l'avait à peine entrevue. [Թեւեւս գոքաւ լոկ քմակարկաւ առասպելներ էին. այսու հանդերձ սա ճշմարիտ է թէ երբ ամբէր ի վեր որ կոմսուհին երկրին մէջ կը բնակէր, հազիւ թէ զինքն ընդնմարած էին]. Je n'y sais qu'un remède, encore est-il fâcheux. CORN. [Միայն մէկ գարման գիտեմ աղօր, եւ այն ալ ցաւաւոր է]. — Etre fondé à... կը նշանակէ իրաւունք,

պահանջներ ունենալ [այս ինչ բանն ընկու, կարծելու եւն]. — Reprocher [յանդիմանել, երեսին զարմել] սեռ ինդիր կ'առնու պակասութիւն կամ յանցանք ցուցնող բառը, իսկ անձ ցուցնող բառը տրական հոլով բնութեան ինդիր. reprocher quelque chose à quelqu'un. je lui ai reproché sa paresse, [ծուլութիւնը երեսին զարկի, ծուլութեան համար զինքն յանդիմանեցի]. — Ses préférences et ses amitiés. գաղիերէնի մէջ որոշիչ ածականք, որպէս յօդը, կը կրկնուին մէն մի գոյականի առջեւ. Chaque état, chaque condition a ses dégoûts et ses amertumes [Մէն մի վիճակ, մէն մի պայման ունի իւր տհաճութիւնքն ու դառնութիւնները]. Այսպէս է նաեւ որակական ածականաց համար երբ նախադասն ու կը վերաբերին մէկէ աւելի գոյականաց. De bons parents et de bons amis. De jolis opéras et de jolis vaudevilles, etc. միայն 10 երբ մէկէ աւելի գոյականք իբր միութիւն մը կը կազմեն մըս. քին մէջ, եւ 20 երբ ու շարկապով միոյցիւր են եւ նշխանաւ են, կրկնութիւն տեղի չունենար. La fortune a son flux et reflux. [Բախտն իւր մակընթացութիւնն ու տեղատուութիւնն ունի]. Ses pères et mères [իւր հայրն ու մայր]. Un triangle ou trigone est une figure géométrique qui a trois côtés et trois angles.

10. Si elles portent sur des camarades etc. Եթէ նոյն առարկայ ունին ընկերներ եւն.

Porter sur... [Բանի մը] վրայ կայանալ, աւարկայ ունենալ [բան մը]. Sur quoi porte votre critique? Ձեր քննադատութիւնն ի՞նչ բանի վրայ է.

11. Qu'il en soit ainsi de nous, Մեզ համար ալ այնպէս ըլլայ. — Il en est de même de, il en est ainsi de... կը նշանակէ [այս ինչին] համար ալ նոյնպէս է. il en est de... comme de... այնպէս է... ին համար [մասին] որպէս... ին. Il en sera de cette réclamation comme de celle de l'an passé. [Այս պահանջման մասին նոյնը պիտի ըլլայ ինչ որ անցեալ տարուանին եղաւ, մի եւ նշն բանը պիտի պատահի].

12. Vivons dans la société des gens de bien, Ապրինք բարի մարդոց ընկերութեան մէջ. Homme և gens բառերն իրենցմէ ետեւ de նախադրութեամբ գոյական ինդիր մ'առնելով կը նշանակեն այս ինչ յատկութեան տէր, այս ինչ դասակարգի, աւարիղի մարդ, մարդիկ. homme, gens de bien, de coeur, de goût, d'honneur, d'avenir, d'action, [բարի, յաջողորտ, ճաշակի տէր, պատուախնդիր, աւագայ ունեցող, գործունեայ մարդ, մարդիկ]. homme, gens de lettres, de loi, d'épée, de robe, de guerre, d'affaires etc. [Գրագէտ, իրաւագէտ, զինուորական, դատաւոր, պատերազմական, գործի եւն. մարդ, մարդիկ].

3. ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՀՍԵ ԻՆՉ ԱՌ Ո ԿԸ ՅՅԱԾԻՅՍ, ՀՍԵՄ ՔԵՋԻ ԹԵ ՈՎ ԵՍ

(Առած մեկնում)

Մարդ չի փախալի տեսնուել այնպիսեաց հետ որոց կացունիստն, շարժումներն

ու գործեր չեն հաճելի. նոցա ընկերակցութիւն պիտի հակառակէր մեր սովորութեանց ու պիտի վիրաւորէր մեր խիղճը: Եթէ մէկու մը հետ յարաբերութեան կը մտնեմք, այդ անոր համար է որ նորա վերայ (ի նմա) կը գտնեմք մեզ նման մի այլ ոք. ուրիշ խօսքով, վասն զի մեր զգացմանց մի արձագանքն կը գտնեմք իրենեւրուն մէջ:

Պարկեշտ մարդ մը կը հեռանայ խաբէքայէ մը. համեստ օրիորդ մը խոյս կուտայ անամօթ աղջիկներէն. կարգ կանոն սիրող ու հոգածու աշակերտ մը խորշու մ'կ'զգայ աղտոտ ընկերակցի մը նկատմամբ: Բնական է այս:

Ուստի և իրաւունք ունի մարդ մեղադրելու մանուկ մ'իւր նախընտրութեանցն ու բարեկամութեանց համար, եթէ նոցա առարկայ են յարգանաց անարժան ընկերներ. իւրաքանչիւր ոք իրաւունք ունի զինքն ալ նման համարելու անոնց որոց հետ յաճախակի յարաբերութեան մէջ է:

«Դու վա՛րդն ես, կը հարցնէին ծաղկի մ'որոյ անոյշ հոտը կը գովէին: — Ո՛չ, այլ անոր քով սպրած եմ» — Մեզ համար ալ այսպէս թող լինի. բարի մարդոց ընկերութեան մէջ սպրինք:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԸՆԹԱՑՔ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ⁽¹⁾

Որպէս արքունիքն Տիգրանի, նոյնպէս Հայոցն, կ'առնուր համյունական թաառնէն: Երբ Լուկուլլոս առաւ զՏիգրանական, գտաւ հոն խումբ մի դերասանաց որ եկած էին տալ չքեղ խաղթատերական. Մանուկ հայ իշխաններ կը կրթուէին ըստ Յունաց օրինակի. մին ի նոցանէ, արքայորդին Արտաւազդ, եղաւ իսկ մատենագիր անուանի (Պլուտ. Կրաս. 33): Եթէ տէրութիւնը տւէր այնպէս, չիք տարակոյս թէ պիտի հելլենանար արագ, ինչպէս Պոնտոսն և Կապադովկիա: Յոյն տարրն որ այնպէս հզօր էր յԱսորիս և ի Միջագետք,

պիտի գործէր աւաքէն իւր ազգու խմոր փոխել յիւր բնութիւն մնացեալ զանգուածը: Յոյնք որ կը զգային զայս, կ'ընդունէին համբերութեամբ Տիգրանայ անագորոյն և խրոխտ բռնակալութիւնն իւրեւ անց որ կը սլաւաբանէր նոր յաղթութիւն քաղաքակրթութեան նոցա»:

Արեւելեան ազգի մը որպիսի էր Հայն՝ այս ուղղութիւնն դէպ ի հելլենականութիւն, չկարէր մնալ առանց ազգեցութեան հայ ժողովրդեան լեզուին վրայ: Մինչ աղնուական մասն, փոքր ի չափէ հմուտ յունարէնին, կրնար վայելել այն լեզուին հասուն պտուղներն, հարկ էր տալ նաև բնիկ, և հարկաւ համեմատութեամբ աւանդուցն մասին, իւր լեզուաւ մտաւոր և բարոյական ճարակ երգերով որ կոչուեցան վիպասանութիւն, սլաւաբանութեամբ համար ժողովրդեան ստորին մասն ևս նոր քաղաքականութեան: Այս չէր հնարաւոր առանց վիպասանութեան, այսինքն ժողովրդեան մտաց, ճաշակին, աւանդութիւններուն յարմար երգեր տեղաւոր ժողովրդեան մէջ: Թէ այսպէս էր արդէն երեք դար ետքը, ունինք պատմական վկայութիւն: Հայ ժողովուրդն համօրէն, նախարարք և շինականք, ուրիշ բանէ չէին առնուր համ, բայց եթէ իւրեանց վիպասանութեան երգերէն (Բուզ. Գ. ԺԳ.): Հելլենականութիւնն, իմա յոյն դպրութեան օրինակն, միայն կարէր տալ յունարէնագէտ Հայ հանճարներու փոխել ժողովրդեան ցոփ և անհարթ լեզուն ի լեզու մատենագրական, կիրթ և ողորկ: Նոցա որ փոքր ի չափէ հմուտ են գրելու մեծ և դժուարին արուեստին՝ կը հարցունենք. ո՞ր ազգ անգիր և առանց դպրութեան, առանց աշակերտելու գոնէ մի դար լեզուի մը որ ունի կատարեալ մատենագրութիւն, և առանց հանճարոյ և փիլիսոփայութեան, կարող է ցուցնել երգեր այնպիսի լեզուաւ և այնպէս փափուկ որպիսի են Երկնէր երկինն, Վարդգէսի երգը, կամ Նաւասարդին զոր կը գտնենք առ Մագիստրոսի: Ի Տիգրանայ մինչ Տիրիթ կամ Տրդատ ըստ Տակիտոսի (Արտաշէս Բ. ըստ Խորենացւոյն) հարիւրամեայ ժամանակն բաւական էր վիպասանաց կամ քրմական քաղղի մը յղկել ողորկել ըստ ոգւոյ և ոճոյ յունարէնին ազգային լեզուն որ ողողեալ էր սլաւերէրէնով Աքիմենեանց իւր չորեքհարիւրամեայ իշ-

(1) Տես քիւ 10.

խանութեան ժամանակ. եթէ չէր, գէթ ուրեք ուրեք ի դաւառաւ, իբրեւ տիրող լեզու, բոլորովին պարսկերէն: Քսենոփոն, մին ի զօրավարաց Յունաց բիւրուն, յանցանելն ընդ Հայս խօսեցաւ Հայ ջրուոր կանանց հետ պարսիկ թարգմանաւ: Արդարեւ, եթէ մանր միտ դնենք, կը գտնենք վիպասանութեան հայերէնն բնիկ հիման վրայ բնիկ և եկամուտ ատաղձով շինուած նոր լեզու արեւմտեան մանաւանդ քան արեւելեան նկարագրով, ուր յայտնի կը տեսնուին հանճար, փիլիսոփայութիւն և արուեստ մը՝ աղբիւր անսպառ ծննդականութեան:

Այս լեզուին ծնունդը մեր պատմութեան մէջ չենք կրնար գետեղել այլուր, բայց ի հարկերամեան ժամանակի անդ, մինչ Հայոց մէջ կը գործէր յունական դարձութեան ազդեցութիւնը զոր կոչեցինք հելլենականութիւն (hellenisme), որոշելու համար միւս խորթ նիւթական և աւելի յետին ազդեցութեանց զոր պատշաճ կը համարինք կոչել յունականութիւն (grécisme) և զորմէ պիտի խօսինք ի ստորեւ:

Գիտենք թէ ոմանք մեր հին վիպասանութեան լեզուին և երգերուն կ'ախորժին տալ սովաւ հնութիւն, և ծնունդը կը դնեն իբրեւ ինքնեկ առանց ամենեւին օտար ազդեցութեան: Այսպէս գնել որ է լոկ ձրի առանց գիտնական սկզբան կամ պատմական ակնարկութեան, չթուիր մեզ բռնաւոր: Ըստ մեզ առանց տակաւ զարգացման և արտաքին ազդեցութեան՝ որ հարկաւ ունի իւր դարը՝ չէր կարող Հայ լեզուն հասնել յայն կատարելութիւն յոր հասած է վիպասանութեամբ: Թող վիպասանութիւնը, նոյն իսկ հայերէնն իբրեւ լեզու, իւր վերջին կատարեալ մատենագրական կազմութեան համար կ'ըսենք, չցուցներ շատ մեծ հնութիւն: Որպէս զի Հայ լեզուին պատմութեան մասին ելլենք ցարդ տիրող տարտամութենէ և գանք գիտնական որոշման, կ'ըսենք իբրեւ հաւանականագոյն. Առանց յայն դարձութեան ազդեցութեան չէր կրնար կազմուիլ Հայ վիպասանութիւնն, և ոչ առանց այն վիպասանութեան՝ ի. դարու հայերէնն. ապա հայերէն մատենագրական լեզուին ձև և ոգի տուողն եղաւ հելլենականութիւնն որ առաջին անգամ մուտ գրտաւ առ առաջին Արշակունեօք ի Հայս, պատրաստուած Սեւակեան քաղաքակրթութեան:

Թեամբ: Եւ որովհետեւ անհնար է մատենագրական լեզու առանց գրոյ, մեր յաջորդ յօդուածով պիտի քննենք գրոյ խնդիրը:

Ա. Մ. ԳԱՐԱԴԱՇԵԱՆ

(Շարունակելի)

Փ Ի Լ Ի Ս Ո Փ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

ՀՈԴԵՔԱՆՈՒԹԻՒՆ (1)

(ՊԼԻՆԻՍԻԱՆԻ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՋ ԱՆԱՆԳԵԱԼ ՊԱՍՏԵՂ ԱՄՓՈՓՈՒՄԸ):

Դ Ա Ս Ե.

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — ՎԵՐԱՅՈՒՄ. — ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ. — ՀԱՆՐԱՅՈՒՄ.

23. Յարդարման կարողութիւնք ի՞նչ բանի կը ծառայեն և ո՞րք են: — Մեր ծանօթութեանց աղբիւրներն, որպէս տեսանք, են Արտաքին Ըմբռնումն, Գիտակցութիւն և Բան. սոքօք կը ճանչեմք արտաքին աշխարհն, կը ճանչեմք մեր անձն ու կ'ըմբռնեմք իրաց հարկաւոր առնչութիւնները եւ առաջին պատճառի մը, բացարձակին գոյութիւնը: Ահա երեք կարգի ծանօթութիւնք զորս ստանալ սահմանեալ է մարդն, և որոց կը հասնիմք մեր ստացման այդ եռակի կարողութեամբ. բայց սոքա, ճշդիւ խօսելով, դեռ կատարեալ և որոշ ծանօթութիւնք չեն գոյացներ. զգայարանք եւ գիտակցութիւն մեր գաղափարաց և խորհրդոց նիւթերը կամ ատաղձները մանաւանդ կը մատակարարեն, իսկ բանը ցոյց կուտայ այն ուղղութիւնը որուն համեմատ միտքն կը գործէ այդ նիւթոց կամ ատաղձից վրայ՝ կազմելու համար բուն մշտածութիւններ, բուն ծանօթութիւններ իրաց բնութեան և կապակցութեան վրայ: Ապա միտքն ի գործ կը դնէ ինչ ինչ գործողութիւններ այդ նպատակին հասնելու համար, գաղափարներ կազմելու և զանոնք շղթայելու համար. ահա՛ այդ գործողութիւնք են որք կը կոչուին Յարդարման կարողութիւնք կամ գործողութիւնք. եւ են Ուշադրութիւն (attention), Վերացում (abstraction), Բաղդասութիւն (comparaison), Հանրացում (généralisation), Դասողութիւն

(1) Տես քիւ 1—10.

(jugement), և իմաստասիրութիւն (raisonnement) :

24. Ուշադրութիւն. իւր պատճառք եւ իւր արդիւնք : — Ուշադրութիւնն է այն ճիգն որով որոշ կէտի մը վրայ կ'ուղղեմք եւ կը պահեմք մեր իմացականութեան գործունէութիւնը , ուշ , միտ կը դնեմք բանի մը . միտքին այն վիճակն է ուր նա կը ձգտի յիշ ինչ զոր կ'ուզէ լաւագոյնս ճանչել : Անորադարձութիւն կամ խորհրդածութիւն ալ կը կոչուի , երբ հոգւոյ ներքին երեւոյթներն ունի առարկայ , որով կրնայ ըսուիլ թէ ուշադրութիւնն արտաքին ըմբռնման կամաւոր և յարատեւող գործողութիւնն է , իսկ անդրադարձութիւնն՝ գիտակցութեան . բայց երկուքին մի են , ըստ որում արտաքին ըմբռնում և գիտակցութիւն իմիասին կը գործեն : Երբ միտքն ուշադիր է , ճանաչողութեան աջակցող մարմնական գործարաններն ալ կ'ստանան ի հարկէ , կամայ ներգործութեան տակ , մասնաւոր ուղղութիւն և ձգտում մը և կը բացուին յատկապէս դէպ տյս կամ այն տպաւորութիւններ , որք երկարաձգուելով ու զատուելով՝ լաւագոյնս ու ճշգրտօրէն կ'ըմբռնուին ու կ'որոշուին իմացականութենէն : Ուշադրութիւնը պէտք չէ չփոթել մտքի այնպիսի վիճակներու հետ , ընդհանրապէս անտարբար , ուր միտքն գրաւուած է բռնաբար մի և նոյն գաղափարներով , և էանկարող դառնալու յայլ ինչ , որպէս յափշտակութեան , ապուրթեան , մենամոլութեան , յիմարութեան պարագայներու մէջ . ուշադրութիւնն է ապէս ազատ ու շարժուն է , իսկ այսպիսի վիճակներու մէջ միտքն անշարժացեալ է ու չի հնազանդիր կամայ փոխուելու համար առարկայէ յառարկայ : Մտաւոր այսպիսի վիճակներ ա'յնքան տարբեր են բուն ուշադրութենէ որ ըստ ձեռնհաս գիտնոց ապուշները , մենամոլներն ու յիմարները բուժելու միակ միջոցն է կարող գործել զանոնք ուշադրութիւն ընելու , վերադարձնելու իրենց մտայ ըստ կամի այս կամ այն բանին ուշ դնելու անկախութիւնն ու ազատութիւնը :

Մեր ամէն կարողութիւնք ընդունակ են ուշադրութեան կամ անուշադրութեան , Այսպէս , մէն մի զգայարան իւր յատուկ առարկայն ըմբռնելու համար կրնայ առաւել կամ նուազ ուշադիր ըլլալ . և կան յատուկ բաւեր որք կը նշանակեն անոնց ու-

շադիր կամ անտարբեր գործողութիւնն . ունկն դնել լսել մ'է ուշադրութեամբ . այլ է դպչիլ կամ հպիլ , ա'յլ է շօտափել որ կ'ենթադրէ մտադրութիւն . հոս առնուլ ու հոսոսել տարբեր են , ինչպէս նաև համ առնուլ և համը նայիլ , նոյնպէս տեսնել ու նայիլ , որոց վերջիններն մտադիր կիրառութիւնը կը բացատրեն մեր հոսոսութեաց , ճաշակելեաց և տեսանելեաց զգայարաններուն : Որպէս տեսանք , գիտակցութիւնն ալ ունի իւր ուշադիր ու անուշադիր վիճակը որ կը չփոթի անգիտակցութեան հետ : Միայն թերեւս բանն է որ , իրեւ աղբիւր անյեղի ու իսկզբանէ կատարելապէս պայծառ գաղափարաց , անընդունակ է առաւել կամ նուազ ուշադրութեան՝ բառին սովորական իմաստով . բայց բանին սկզբանց մասին ալ կրնայ միտքն անուշադրութեան վայրկեաններ ունենալ , չխորհիլ անոնց վրայ :

Ուշադրութեան պատճառք երկու են , արտաքին և ներքին : Արտաքին է պատճառը , երբ բուն տպաւորութիւն մը յանկարծ մեր ուշն առ ինքն կը գրաւէ . զոր օրինակ , երբ փողոցէն աղաղակ մը լսելով կը վազեմ պատուհան նայելու թէ ինչ բան պատճառ է այդ աղաղակին : Մանկան ուշադրութիւնն շատ մշտաշարժ է , վստն զի ամէն ինչ իւր շուրջը նոր լինելով իրեն համար՝ ամեն վայրկեան իւր ուշը կը գրաւուի տարբեր առարկայներէ : Ներքին ու հոգեբանական է ուշադրութեան պատճառը , երբ կամօք և համակրութեամբ մեր միտքը կը սեւեռենք առարկայի մը՝ կամ գաղափարի մը վերայ : Այսու չափահաս մարդը կարող կը լինի երկարատեւ աշխատութեան , ուսումնասիրութեան : Երբ կամք և համակրութիւն միացած են , այն ատեն կը դիւրանայ աշխատութիւնը . բայց միշտ մեր զգացմամբն ալ չե'մք բերուիր բանի մը որոյ վրայ մեր կամքը կ'ուզէ կեդրոնացնել մեր մտածութիւնը . յայնժամ դժուարին ու ծանր է աշխատութիւնն եւ կամայ մեծագոյն ճգանց կարօտ :

Ճշմարիտ չէ թէ ուշադրութիւնն իսկըզբան անդ կը զօրացնէ մեր կարողութիւնները , այլ կը դնէ զանոնք գիտելու եւ զննելու յարմարագոյն կացութեան մէջ , ինչպէս որ երբ ուղեմք թատրոնի մը մէջ լաւ տեսնել դերասանաց խաղն ու լաւ լսել , կ'ընարեմք տեսարանին մերձաւոր

պատշաճագոյն տեղն . բայց գիտեցու , ու-
շագիր լինելու , ուսումնասիրելու սովորու-
թեամբ կը զօրանան մեր մասուր կարողու-
թիւնը , կ'առաւելու կորովն իմացականու-
թեան , որպէս մարզանք կը զօրացնեն դըն-
դերները : Հանձարն իսկ երկարատեւ համ-
բերութիւն մ'անուանեց Պիւֆոն , և Նե-
տոն այնոցիկ որք կը հարցանէին իրեն թէ
ինչպէս գտած էր ձգողութիւնը՝ կը պա-
տասխանէր՝ « Միշտ անոր վրայ խորհելով : »
Ուշագրութիւնն կ'ամփոփէ մտքին ոյժերը ,
կ'ուղղէ , կը կեդրոնացնէ կէտի մը վրայ որ
այսպէս կ'ստանայ առաւել պայծառութիւն ,
ինչպէս մանրագէտ գործին , ժողովելով լու-
սոյ ճառագայթներն , առարկային պատկերն
կ'ստուարացնէ ու կը սլայծաւացնէ աչաց
համար : Ուշագրութեամբ վերջապէս ծա-
նօթութիւնը կը լինին որո՞ւ և տեսական ,
մինչդեռ առանց անոր տպաւորութիւնը
են տարտամ , աղօտ , անորոշ և մեր գիտա-
կցութեան մէջ վաղաջինը հետք մը միայն
կը թողուն : Ուշագրութիւնն սկիզբն է գի-
տութեան , վասն զի գիտնալու համար պէտք
է նախ զարմանալ , իրաց զիարդն ու վասն-
էրը հարցնել , նշմարել ինչ որ անտարբեր
է . ռամբին , և այս ամենայն չէ կարելի ա-
ռանց ուշագրութեան : Պատոն ըսած է՝
« Զարմացումն գիտութեան հայրն է » , և
զարմանալու պայմանն է ուշ դնել :

Ուշագրութեան այս արդեանց ու առա-
ւելութեանց քով պէտք է նշանակել աստ
այլամբութեան վտանգները : Վը-
տանդաւոր է արդարեւ , մտաց և սրտի զար-
գացման համար՝ միայն , կարգ մ'իրաց ու
գաղափարաց նուիրել իւր ուշն և այլումա-
մենայն լինել անտարբեր . այսպէս չատմար-
դելի միայն իրենց ի գործ դրած արհեստին
ու հանապազօրեայ զբաղմանց վրայ կը խոր-
հին , և գիտուններ իսկ կան որոց համար
իրենց ճիւղէն դուրս ոչ ինչ կարեւորութիւն
ունի : Այսպիսիք ի հարկէ կ'ունենան ան-
ձուկ ու սահմանափակ միտք , թերի զգա-
յումներ : Պէտք է բաց ունենալ միտքն այ-
լազան գաղափարաց , ամէն տեսակ ճշմար-
տութեանց և սիրտն՝ այլազան գեղեցկու-
թեանց . այս տեսութեամբ միակողմանի
անձուկ դաստիարակութիւն մը յոյժ վնասա-
կար է մտաց :

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ⁽¹⁾

ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼՔ

ՃԵՆԳ

Թէ և հին քաղաքակրթութեան պատ-
մութիւնը կ'սկսի Եգիպտացիներէն և Քաղ-
դէացիներէն , բայց ձենաց քաղաքակրթու-
թիւնն առաւել հնագոյն է . քան զնոցայն ,
ուստի արժան դատեցի վարչարարի իմն
նշանակել ծայրագոյն արեւելից ժողովրդ-
եան յառաջգիմութիւնը :

Քաղաքակրթութիւնն՝ ըստ բանից հըռ-
չականունն Փոթ բանասիրին՝ հետեւած է ա-
րեւու ընթացքին — ex oriente Lux , լոյս
ի յարեւելից — : Նախ ձենք թօթաիեցին
հին ժողովրդոց կիսավայրենի վիճակն , սա-
կայն տիեզերական պատմութեան մէջ մեծ
պաշտօն մը չկատարեցին :

Ճեմատան . — Ճեմատան կամ Զինաս-
տան (Սերեկիա) կը գրաւէ Ասիոյ արե-
ւելեան եւ հիւսիսային արեւելեան մա-
սերը : Ճեմատանի արեւելեան կողմը կը
թրջուի Մեծ ովկիանոսէն և նորա բա-
զուկներէն , իսկ միւս կողմերը կը չըջա-
պատուին Ալթայ , Ալաթաւ և Հիմալայա
լեռներէն : Ճեմատանի Հիւս . և Արեւմտ .
մասերը կը կազմեն անհուն լեռնադաշտեր ,
Մոնկոլիա (Երկիր խոտոյ) և Փոքր Պուխարա ,
ուր կը տեսնուին ամպածրար և հրաբխա-
յին լեռներ : Այս լեռնադաշտը կ'ուղղուին
բազմաթիւ գետերէ որք կը սուզին աղուտ
լիճերու մէջ : Կեդրոնական մասին լեռնա-
դաշտն՝ Կոպի անապա՝ է բնակավայր հով-
ուաց որք կը գեղերին արօտավայրէ յարօ-
տավայր : Ճեմատանի հարաւային մասն՝
Թիպէթ՝ Գուէն-Լուն և Գարա-Գորում լե-
ռանց միջև , է և՛ լեռնային և՛ անբեր (թէ
և ունի նաեւ արօտատեղիներ ուր կ'արածին
անթիւ հօտք այծից և ոչխարաց) : Հարա-
ւային բարձրագիր հովտաց մէջ գետեղուած
են Թէնկրի (Երկինք) , Գու-գու-նուր (Կա-
պոյտ լիճ) , Բալթի ևայլն լիճք , ուստի կը
բլիսին Ինդոս , Պրահմաբութրա , Իրաուա-
տի , Մէյ-Քոնկ , Եանկ-Ձէ-Քիանկ և Հոանկ-
Հոյ գետք : Իսկ Հիւս . Արեւել . և Արեւելեան
մասերը՝ բուն Ճեմատանն՝ ունի հակապատ-
կեր երեւոյթներ , — տափաստանաց , անա-

(¹) Տես քիւ 10 .

պատառաց և լերանց կը յաջորդեն ծածանուադաշտեր՝ ոռոգեալ յալթաշուր գետերէ և բազմաթիւ ջրանցքներէ, ուր կը տեսնուին խիտ առ խիտ բազմամարդ քաղաքք: Ձինաստան ունի այլազան կլիմայ և բուսաբերութիւն, և բազմազան մետաղներ և մեծագին քարեր:

Ճենք. — Ճենք՝ ըստ ազգ. աւանդութեան՝ իջած են Մոնկոլիոյ անապատներէն. են, առհասարակ, դեղնագոյն, ցցուած այտերով, նեղ աչքով, գօշ մորուքով, կարճ բայց թանձր իրանաւ, հողազործ, համբերատար, անտեսազէտ, սիրող և աւանդապաշտ նախնեաց յիշատակաց. այսու թերեւս մեծ ազդեցութիւն պիտի ունենան յԱրեւել յապայտ: Նոցա պատմութիւնն կ'սկսի 2354 նախ քան զՔր. ըստ Շու. Գրիգորի:

Ինքնակալ. — Որպէս համայն ազգաց, նոյնպէս Ճենաց ծագումն յոյժ առատաբերալատն է: Յանյիշատակ ժամանակս այս երկրին կը տիրէին Մոնկոլք, որոց ժամանակ փայլեցան Ֆո.հի, Նաո, Շուկ և Ին անուանի օրէնսդիրքք:

Ճենք ունեցան զանազան հարստութիւններ (dynastie): Զէ-ու հարստութեան ինքնակալն Շի-Իոանկ-Թի հաստատեց հին բռնակալութիւնն և հրամայեց այրել Կոնփիլիկիսի գրքերն. բայց գրքերն՝ հարազատ կամ անփաւեր՝ մեծաւ զգուշութեամբ գետնափոր տեղեր պահեցին:

Հա-Նի հարստութեան ժամանակ (206—263 յետ Քր.ի) Ճենաստան իւր քաղաքական զօրութեան և աշխարհագրական՝ ընդարձակ տարածութեան գագաթնակէտը հասաւ, և կառուցաւ ձեռնակալ հասարէս պարիսպն ընդդէմ օտարաց յարձակմանց: Այս հարստութիւնն իւր պաշտօնական կըրօնք հռչակեց Կոնփիլիկիսի վարդապետութիւնը:

Մեր թուականին է. դարուն փայլեցաւ Թէ-Չոնկ առաքինի և խնամտուն կայսրը, բայց Թանկ հարստութենէ վերջ (Ժ. դար) Ճենաստան քայքայեցաւ:

Կրօնք. — Ճենք բազմաստուածեան են. նոցա վերին աստուածութիւնն է Թի-էն (երկինք), կամ Շանկ-թի, որ կը համարուի արարչագործութեան գործօն սկիզբն ոյր որդին է կայսրը: Կայսրը Թի-էնի պատկերն է յերկրի վերայ, և նորա պաշտօնն է պահապան կալ օրինաց: Ըստ ոմանց՝ Ճենք

աննիւթ էին գաղափարը բացատրող բառը չուին, միայն Թի-էն անունը կուտայ Բացարձակ միութեան, Տիեզերական օրինաց, — Աստուծոյ — գաղափարն որ թանձրացեալ է յանձին տիրող ինքնակալին:

Ճենաց կրօնից հիմունքը կը կազմեն այլանդակ արարողութիւնք և սնոտեաց պաշտամունք, հանդերձ բարոյական և խնայողութեան պատուէրներով (Տես Թիւլիէն Վէնսօնի՝ Արդի կրօնք): Ամէն աղբւր, ամէն անտառ և ամէն լեռ ունի իւր յատուկ աստուածն: Ճենաստանի մէջ կը տիրեն համահաւասար կերպիւ երեք կրօնք, Պուսսալականութիւն. Թայոյականութիւն և Կոնփիլիկիսականութիւն:

Ճենաց կրօնքը կը պատուիրէ հնազանդութիւն մանկանց առ ծնօղս, կանանց՝ առ ծնօղս և հպատակաց՝ առ իշխանս: Եւ սակայն որդւոց ակնածանքն և հպատակութիւն պէտք չէ որ լինին կոյրզկուբայն, այլ խնայողութիւնը կրնայ ուղղել պատշաճաւոր եղանակաւ ծնօղաց ապօրէն գործերը:

Բազմակնութիւնը խոտելի չէ, զի եթէ կին մի ամուլ լինի, միւսը կրնայ ծնանիլ որդի մի, որով կը գործադրուի կենաց խկական նպատակն, այսինքն չարունակել սերունդը վառ պահելու նախնեաց յիշատակը: Կնաթողութիւնը միայն ներքի է յայնժամ, յորժամ հետեւեալը ստուգուին ամուլութիւն, անհնազանդութիւն առ սկեսայրն և սկեսուր, վաւաչողութիւն, մախանք, բորոտութիւն, չաղիպաղութիւն և դողութիւն: Իսկ կինը կը բարձրանայ միայն մայրութեամբ:

ԳԱԻԹ Յ. ԽԱՉԿԵԱՆ

(Շարունակելի)

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՏՈՒԱԾՔ

ՅՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ի

Որոց ասեցն քէ ծերութիւն դադարեցուցանէ ի գործոց

Ի գործոց, ասեն, գաղարեցուցանէ յորո՞ց գործոց. յայնցանէ՞ ինչ արդեւք, որ ի մանկութեանն եւ ի զօրութեան գործիցին: Եւ արդ չգո՞ն ինչ իրք ծերոց, որք թէ-

պէտ եւ տկար մարմնովք ոչ, սակայն մտք մատակարարեցին: Արդ Կ. Մաքսիմա ինչ ո՞չ գործէր. ո՞չ եւ Ղ. Պաւլոս հայր քո, Սկիպիոն, աներ որդւոյ իմոյ առնն քաջի. եւ այլ եւս ծերքն, Փարրիկիոս եւ Կուրիոս եւ Կարունկանիոս, մինչդեռ խորհրդով եւ ճոխութեամբ՝ քաղաքին պաշտպանէին, գործ ինչ ո՞չ վճարէին:

ՅԱպպեայ Կղազեայ ծերութեանն վերայ եւ այն եւս յաւելոյր, զի կոյր էր. սակայն սա, յորժամ ծերակուտին միտք ի խաղաղութիւն հսկէին եւ ի կռել դաշինս ընդ Պիւռեայ, ասաց զայն՝ զոր Եննիոս գրէ,

Միսf ձեռ, որ յառաջ քան զայս սովորն էին
Ուղղորդ կալ յակասանի, յո՛ր կոյս թիւեալ
խոսորեցան:

Եւ այլ ինչ ե՛ւս սաստիկ, քանզի ծանօթ իսկ ձեզ երգն է. սակայն Ապպիոսի իսկ ճառք կան: Այլ զայն նա եւթնեւտասն ամօք յետոյ քան զերկրորդ բղբշխութիւնն արար, մինչ ի մէջ երկուց բղբշխութեանց տասն ամբ ի միջի անցեալ էին, եւ համարակար եւս յառաջ քան զառաջին բղբշխութիւնն լեալ էր: Ուստի յայտ առնի թէ սու Պիւռեայ կռուովն ծերացեալ էր հասակաւ. և այսպէս իսկ ի հարց ընկալաք:

Արդ չբերեն ինչ ի մէջ, որ չառնուն յանձն թէ ծերութիւն ընչ գործ ինչ գայցէ. եւ նոցա նման են, որք վնասւալարէ ի նաւարկելն ասիցեն, թէ ոչ մի ինչ գործ գործէ. մինչ այլք ընդ կայման ելանեն, այլք ընդ տախտակամած յատակսն ընթանան, կէսք զջուր մխոյաւ հանեն. իսկ նա զսամիսն ուղղիչ նաւին ի ձեռն առեալ ի խելսն նաւին նստի հանդարտիկ. չառնիցէ զայն զոր պատանիքն գործիցեն, այլ մեծամեծս յոյժ եւ ազնուագոյնս գործիցէ: Ոչ զօրութեամբք կամ երազութեամբք կամ սաստիկութեամբք մարմնոց մեծ ինչ իրք վճարիցին, այլ խորհրդով եւ խմաստութեամբ, յորոց ոչ միայն չէ սովոր վրիպել ծերութիւն, այլ եւ յաճախէ եւս նոքիմբք:

Ապա թէ ոչ՝ ես որ եւ ի զինուորութեան եւ ի հազարապետութեան, և ի չըրեշտակութեան, եւ ի բղբշխութեան համակ ի պէսպէս պատերազմունս չըջեցայ գուցէ թուիցիմ ձեզ, թէ այժմիկ դադարեալ իցեմ, որովհետեւ չհարկանեմ պատե-

րազմունս: Այլ ծերակուտին՝ որ ինչ իրք գործեցոց իցեն եւ զիարդ, յառաջագոյն կարգեմ եւ յօրինեմ: Կարքեդոնացւոց քաղաքին՝ որ հանապազ չարիս խորհի, յառաջագոյն պատերազմ՝ յայտ առնեմ ի քաղաքէ անտի զանգիտել. և չդադարիցիմ մինչ-չեւ իցեմ գիտացեալ թէ քանդեցաւ:

Երանի՛ թէ քեզ Սկիպիոն գլաղթութիւնն պահեալ էր անմահ դիցն, զի զոր հաւուդ քո թողեալ իցէ, զայն դու ի գլուխ հանիցես. ի մահուանէ նորա այս երեսներորդ ամ է. այլ զյիշատակ առնն այնորիկ ամենայն ամբ՝ որ զկնի դայցեն, առցեն փոխանակաւ: Միով ամառ յառաջ քան զիմ համարակարն լինել, մեռաւ, ինն ամօք յետոյ քան զիմ բղբշխութիւնս. յորժամ բղբեշխն եկաց երկրորդ անգամ, մինչդեռ եսն բղբշխ էի:

Արդ եթէ ցհարիւրորդ ամս կեցեալ էր, ստրջանայր ինչ ընդ ծերութիւն իւր: Քանզի ոչ արշաւանաւ եւ ոչ վազիւք, եւ ոչ ի հեռատանէ տիգօք եւ գեղարդեամբք, կամ ի մօտոյ սուսերօք վարէր, այլ խորհրդով, բանիւ եւ մտօք: Թէ սոքա ի ծերսն չէին, ոչ զգլխաւոր խորհրդակա՝ նութիւնն մեր աւագք ծերակոյտ կոչէին:

Առ ի Ղակեդեմոնացւոց եւս, որ զմեծ իշխանութիւնն ունիցին, նոյնպէս ծերք կոչին, որպէս եւ երն իսկ: Եւ եթէ կամիցիք ընթեռնուլ կամ լսել զարտաքնոց, գլխատնիցէք զի քաղաքք մեծամեծք յերիտասարդաց կործանեցան եւ ի ծերոց հաստատեցան կանգնեցան կացին:

Աղէ ասա, գիարդ գայնալի քաղաքն ձեռ այնպէս վաղ կորուսէ:

Քանզի ցնա, որ այնպէսն հարցանէր, որպէս ի նեւիտսի պւեռէի խաղսն կայ, այլովք հանդերձ եւ այս պատասխանի տըւաւ:

Յառաջ գային յաւագութիւնն նաւսարախաւսf Գոմf երիսասարդf սխմարf,

Քանզի յանդգնութիւն ի ծաղկի փթթելոյ հասակի է. խմաստութիւն՝ ծերացեցոց տիոց:

Թարգ.

ԿԻԿԵՐՈՆԵԱՅ

Հ. ՅՈՎ.Ս. ԳԱԹՐՃԵԱՆՅ

ՎԱՍԵ ԵԵՐՈՒԹԵԱՆ

—•••••—

ՍՈՒԱԿԻ ԵՒ ԽՈՒՄՈՒՆԻԿ ԿԵԹԼԻ

1. Ձէ ինչ պիտոյ չուրջ գալ զերկրաւ առ ի խելամուտ լինել թէ ամենայն ուրեք կապոյտ են երկինք :

2. Քան զամենայն թերութիւնս մեր մեծ ա՛յն է զի երկմտիմք զստուգէն եւ հաստատել կամիմք զանստոյգն : Սկզբունք իմ, մանաւանդ յուսման անդ բնութեան, հաստատել է զստոյգն եւ հանապազ ի ըզ-գուշի կալ առաջի անստուգին :

3. Առ մաթեմատիկոս կատարեալ լինել, պարտ է նախ քան զամենայն ինչ այր կա-տարեալ լինել : Յորժամ իմանալ կարիցէ ոք զգեղեցիկն որ ի ճշմարտին է, յայնժամ մի-այն մարթի լինել խորին, կորովամիտ, լուսաւոր, շնորհալի եւ պերճ իսկ : Քանզի պարտ է լինել այս ամենայն՝ առ ի նմա-նել Լակրանժի :

4. Ինչ մի որ կարի յիմարութեան է յաշ-հի աստ ա՛յն է զի իւրաքանչիւր ոք պար-տական համարի զանձն ուսուցանելոյ այ-լոց զոր գիտելն կարծէ :

5. Ասա ինձ առ որովք դեգերիս եւ ես ասացից քեզ ո՛ր ես դու, ասէ հին ինչ ա-ռակ : Եւ ես յաւելում. Ասա ինձ ի՞նչ իւրիք գրադիս եւ ես ասացից քեզ թէ զինչ կա-րիցիս լինել :

6. Փշելն ի սրինգ չէ հարկանել սրինգ : պարտ է եւ զմատունան շարժել :

7. Թերութիւն մեծ է ունել զանձն առ ինչ մի առաւել քան զոր էն, կամ նուազա-գոյն համարել զանձն քան զայն զոր ար-ժէ ոք :

Թարգմ.

Գ. Ս.

(Շարունակելի)

ՄԱՀԱՄԵՐՁ ԾԵՐՈՒՆԻՆ

Արեւը կը խոնարհէր, եւ երեկոյն անդըստին Կ'ըստուերէր ըզհորիգոն : Քարին վըրայ, մէջ գաշտին,

Ծերունի ոմն ալեւոր՝ ոյր վախճանն էր մօ-տալուտ,

Նըստած էր հոն մըտախոհ, դարձուցած դէմքն յարեմուտ :

Վաղեմի հովիւ մ'էր նա, լեռներու մէջ խաշնարած,

Որ երբեմն առոյգ՝ աղքատ՝ անվիշտ՝ ազատ՝ անկասկած,

Իրիկուան ըստուերներով ծըրարուէին մինչ լերինք՝

Նըւագէր զըւարթագին անտառաց մէջ զիւր սըրինգ :

Իսկ հիմայ ծեր եւ հարուստ, յիշատակօք հոգին լի,

Բազմանդամ գերդաստանի մ'աշխատաւոր հայր բարի,

Իւր խաշանց երամակներ մինչ ի դաշտէն դառնային՝

Երկրէ վեր բարձրացած՝ երկնից կայր նա ի զընին :

Հուսկ յետին ժամերն օրուան՝ արշալուսի փայլն ունին. —

Կ'երագէր կապուտագեղ այն երկնից տակ ծերունին :

Իւր առջև Ովկէանը կը տարածուէր՝ ան-սահման

Զերդ ըզյոյս առն արդարոյ գերեզմանին առ դըրան :

Ո՛վ վայրկեան հանդիսաւոր : — Հըսկոյ լեռներ՝ կառղած ծով

Եւ հովեր կը լըռէին՝ աղմուկներու վերջ տալով :

Ծերունին պի՛շ կը նայէր մարը մըտնող ա-րեւուն,

Եւ արեւն ալ կը նայէր մահն ողջունող ծե-րունւոյն :

Թարգ.

Վ.Ի.ԹՕՐ ՀԻԿՈ

ՆՇԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ



Ա Ձ Դ

12րդ. թիւէն յետոյ պիտի ստիպ-ուինք դադարեցնել «ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ» շրկել մեր գաւառացի այն ազնիւ բա-ժանորդաց որք մինչեւ նոյն թիւն ան-վճար պիտի թողուն իւրեանց բաժա-նորդագինը :

Արսոնաէր Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

ՏՅՈՐԷՆ—Խմբագիր

ՄԻՀՐԱՆ ԱՍԳԱՆԱՋ

Տպագր. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Պօլիս, Էսկի Ջապրիէ նասսէսի, 61.